«Summer Fest» համերգին Telcell-ի տաղավարում գովազդային վիճակախաղի պայմաններ

1. **Ներածություն**

1.1 «Summer Fest» համերգին Telcell-ի տաղավարում կազմակերպվում է թվով երկու գովազդային վիճակախաղ: Առաջին գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Գովազդային վիճակախաղ 1) կազմակերպվում է «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության գովազդային քաղաքականության շրջանակներում Ընկերության Telcell Visa Digital տեսակի քարտերի (այսուհետ՝ Քարտ) քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար, իսկ երկրորդ գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Գովազդային վիճախաղ 2) կազմակերպվում է Ընկերության «Telcell Wallet» բջջային հավելվածի օգտատերերի համար:

1.2 Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ է հանդիսանում «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.3 Մասնակցելով Գովազդային վիճակախաղին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Քարտապանների համար իրականացվող Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է https://blog.telcell.am/ կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Գովազդային վիճակախաղի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Գովազդային վիճակախաղի շրջանակում նվերները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Գովազդային վիճակախաղի մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Գովազդային վիճակախաղ 1-ի շրջանակում սույն թվականի հուլիսի 11-ին «Summer Fest» համերգին Telcell-ի տաղավար մոտեցած՝ Telcell x AEB Visa թվային քարտ ունեցող յուրաքանչյուր Քարտապան կարող է հանդիսանալ Գովազդային վիճակախաղ 1-ի մասնակից, այդ թվում բավարար պայման է համարվում վերոնշյալ թվային քարտի բացման հայտ ներկայացնելը: Գովազդային վիճակախաղ 1-ին յուրաքանչյուր Քարտապան կամ վերոնշյալ թվային քարտի բացման հայտ ներկայացրած Օգտատեր կարող է մասնակցել 1 անգամ:

Գովազդային վիճակախաղ 1-ի նկարագրությունը հետևյալն է՝

1. Մասնակիցը լուսանկարվում է համապատասխան Ֆոտոխցիկի դիմաց,
2. Լրացնում է իր էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը և գրանցվում է,
3. Նկարներն ուղարկվում են լրացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ Telcell-ի բրենդավորմամբ,
4. Էկրանին հայտնվում է վիճակախաղի հաջողության անիվը, մասնակիցը սեղմում է պտտել կոճակը,
5. Անիվը պտտելուց հետո էկրանին հայտնվում է շահած նվերի անվանումը և նկարը,
6. Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է չկրկնվող QR կոդ,
7. Ուղարկված QR կոդը սկանավորվում է Telcell-ի աշխատակցի կողմից՝ հեռախոսով, հատուկ գովազդային վիճակախաղի համար նախատեսված ծրագրով, որի հիման վրա աշխատակիցը հանձնում է նվերը մասնակցին:

Գովազդային վիճակախաղ 1-ի նվերների ցանկը՝

- 5000 «BON» – 200 հատ,
- Ուղետոմսի մեկ ամսվա փաթեթ - 10 հատ,
- «Լանջ» լողավազանի մուտքի տոմս - 15 հատ,
- «President Hotel» լողավազանի մուտքի տոմս - 10 հատ
- Բրենդավորված կտորե պայուսակ (tote bag) – 50 հատ,
- Այլ գործընկերների տաղավարներից օգտվելու կուպոններ – 200 հատ:

Յուրաքանչյուր մասնակից ստանում է նվեր, իսկ նվերների դուրս գալու հավանականությունը բաշխվում է հավասարաչափ՝ ելնելով յուրաքանչյուրի համար սահմանված առավելագույն քանակից և ընդհանուր նվերների առավելագույն քանակից:

Գովազդային վիճակախաղ 2-ի շրջանակում սույն թվականի հուլիսի 11-ին «Summer Fest» համերգին Telcell-ի տաղավար մոտեցած՝ «Telcell Wallet» բջջային հավելված ունեցող յուրաքանչյուր Օգտատեր կարող է հանդիսանալ Գովազդային վիճակախաղ 2-ի մասնակից,

Գովազդային վիճակախաղ 2-ի նկարագրությունը հետևյալն է՝
Նվերների անվանումներով խորանարդները լցված են Telcell-ի բրենդավորված «Хватайка»-ի մեջ, «Telcell Wallet» բջջային հավելված ունեցող յուրաքանչյուր Օգտատեր կարող է մասնակցել Գովազդային վիճակախաղ 2-ին՝ 1 անգամ, որը ներառում է 2 խաղի հնարավորություն: Օգտատերը հաղթում է, եթե կարողանում է դուրս հանել լցված Խորանարդներից որևէ մեկը, Telcell-ի աշխատակիցը տրամադրում է այն Նվերը, որը գրված է մասնակցի հանած Խորանարդի վրա:

Գովազդային վիճակախաղ 2-ի նվերների ցանկը՝

- Կտորե պայուսակ (tote bag) - 150 հատ,
- Թերմոս - 25 հատ,
- Ուղետոմսի 10 ուղևորության փաթեթ - 75 հատ,
- Գլխարկ - 50 հատ:

3.2 Գովազդային վիճակախաղի շրջանակում յուրաքանչյուր հաղթող Մասնակցի կտրամադրվի սույն Պայմաններով սահմանված Նվեր ըստ Գովազդային վիճակախաղի պայմանների:

3.3 Նվերն ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.4 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Նվերի որակի և մատուցված ծառայության համար:

3.5 Գովազդային վիճակախաղերի հաղթողները պարտավորվում են տալ համաձայնություն՝ հրապարակել և տարածել հաղթողի անուն ազգանունը, տեսա-ձայնա-լուսանկարահանել նվերն ու հաղթողին և արդյունքը հավաքագրել, պահպանել և տարածել՝ գովազդային և օրինական այլ նպատակներով: Սույն կետի խախտման դեպքում նվերն ենթակա չէ հանձման հաղթողին:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել https://telcell.am/ կայք կամ զանգահարել +374 60 272222, +374 60 272223 հեռախոսահամարներով:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: